



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոտերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2022


Նույնբերի առաջին տասնօրյակ

*Տեղեկագիրը կազմել է ագրոտերևութաբանության բաժինը՝
մասնագիտացված ագրոտերևութաբանական կայաններից ստացված
տեղեկատվության հիման վրա:*

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի առաջին փասնօրյակում օդի օրական միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական ու բացասական շեղումներով:



Տասնօրյակային ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են փասնօրյակի կեսին. Տավուշում՝ +17...+19°C, Սյունիքում՝ հովվային շրջաններում՝ +20...+24°C, նախալեռնային շրջաններում՝ +14...+18°C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +10...+12°C, նախալեռնային շրջաններում՝ +19...+21°C, Շիրակում՝ +11...+14°C, (Աշոցք՝ +8°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +12...+14°C, նախալեռնային շրջաններում՝ +15...+16°C, Լոռիում՝ +14...+17°C, Գեղարքունիքում՝ +8...+13°C, Արմավիրում՝ +20...+22°C, Արարատում՝ +19...+22°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +13...+18°C, լեռնային շրջաններում՝ +8...+11°C:

Օդի ամենացածր ջերմաստիճանը դիտվել են 2, 7-9-ը. Տավուշում -3...+1°C, Սյունիքում՝ հովվային շրջաններում՝ +2...+5°C, նախալեռնային շրջաններում՝ -5...-7°C, (Գորիս՝ -1°C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ -3...-5°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+1°C, Շիրակում՝ -3...-7°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ -3...-4°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+1°C, Լոռիում՝ -1...-5°C (Տաշիր՝ -8°C), Գեղարքունիքում՝ -2...-4°C (Գավառ՝ -6°C), Արմավիրում՝ -2...+1°C, Արարատում՝ 0...+1°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 0...+2°C, լեռնային շրջաններում՝ -5...-7°C:



Տասնօրյակի ընթացքում տեղումներ Շիրակի մարզում դիտվել է միայն Աշոցքում 1մմ (5%), Լոռիում՝ 1-4մմ (6-26%), Տավուշում՝ 1-4մմ (5-23%), Արագածոտնում՝ (Ծաղկահովիտ՝ 2մմ-13%), Գեղարքունիքում՝ 1մմ (8-9%), Սյունիքում՝ 1-2մմ (8-10%), Կոտայքում, Արմավիրում, Արարատում, Վայոց ձորում տասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:










Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը շրջանների մեծ մասում գրանցվել է -5...-10°C, առանձին նախալեռնային և հովտային շրջաններում՝ 0...+3°C:



Օդի միջին հարաբերական խոնավությունը լեռնային և նախալեռնային շրջաններում կազմել է 75-83%, Ամասիա, Ծաղկահովիտ՝ 90-94%, հովտային շրջաններում՝ 53-73%:

Օդի նվազագույն հարաբերական խոնավությունը լեռնային և նախալեռնային շրջաններում կազմել է 38-74%, Արարատյան դաշտում՝ 23-30%:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Գյուղատնտեսական աշխատանքների կատարման պայմանները

Ամսվա սկզբին ամենուրեք աշնանացան ցորենի վեգետացիան շարունակվել է:

Առանձին լեռնային և նախալեռնային շրջաններում (Գյումրի, Սյունիքի մարզ) աշնանացանը թփակալել է, մնացած շրջաններում առաջացել է երրորդ տերևը, հովտային շրջաններում աշնանացան ցորենը ծլել է:

Եղանակային պայմաններն այնքան էլ նպաստավոր չէին աշնանացանի աճի և զարգացման համար. անբավարար տեղումների հետևանքով հողում խոնավության պաշարները ցածր են, որն էլ բացասական կանրադառնա հատիկի աճի և ծլունակության վրա:

Աշնանացանի բարձրությունը փաստորյակի վերջին կազմել է 6-10սմ:

Արարարյան դաշտում կատարվել է խաղողի վազի այգեթաղ, դիտվել է պտղատուների տերևների գունափոխում և տերևաթափ:

